

ՆՈՐ ՆՈՒԹԵՐ

ԵՐԵՄԻԱ ՉԷԼԷՊԻ ՔԷՕՄԻՒՐՃԵԱՆԻ ՄԱՍԻՆ

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1966, ք. 7-8, էջ 175)

Դ.

ԵՐԵՄԻԱ ՔԷՕՄԻՒՐՃԵԱՆԻ ՔԱՆԻ ՄԸ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տարիներ առաջ, Կ. Պոլսէն, Պետրոս Նշանեան զրաւաճառը, իր մահէն առաջ, ինծի առաջարկած էր զբնագիր մը, ուր կային Երեմիա Քէօմիւրճեանի ինչ ինչ հեղինակութիւնները: Նշանեանի մահէն ետք, ողբացեալ զրաւէտ և բանասէր բաբելիամս՝ Թորոս Աղատեան կրցաւ ձեռք բերել զբնագիրը և ինծի ուղարկել: Այժմ հաւաքածոյիս թիւ 44 զբնագիրն է, չազանակազոյն զրոշմազարդ կաշիով պատած, տախտակէ կաղմով, ներսէն աստառուած, ընտիր բոլորգրով զբնագրի մը թղթեայ թերթերով: Ութածալ մեծութեամբ այս հատորը՝ կատարեալ վիճակի մէջ է: Եւրոպական ջրանիչեալ թուղթով, նոտրգիր զրուած այս հատորը, կաղմըւած է քանի մը իրարմէ անկախ զբնագրական հատուածներէ: Հոս կու տամ պարունակութիւնը:

Էջ 1ա. բոլորգիր «Թուին ՌՃ և ԻԹ (1680) ամին, մարտի ամսոյ ի ԺԵ (15)ն եհաս տետրս ի ստամպոլու ի յիս»: Անդ կայ նաեւ նոյն յիշատակութիւնը, նոտրգիր, այլ ջնջուած:

Էջ 2ա. անխորազիր, կարմրաւ. «Մապէթ անուն հրէայ ոմն յայտնեալ»: Սապէթին քով կարմրաւ մանրագիր աւելցուած է «այ»: Յաջորդ էջը պարապ թողուած է, հաւանաբար մոռացութեամբ: Ոտանաւորը կը բաղկանայ հատուածներէ

և կ'աւարտի էջ 14բ: Հ. Ներսէս Աղինեան, իր ԵՐԵՄԻԱ ՔԷՕՄԻՒՐՃԵԱՆ (Վիեննա, 1933, էջ 120-123) ուսումնասիրութեան մէջ, կը խօսի նաեւ Երեմիայի այս ոտանաւորին մասին, իրր անոր 15րդ հեղինակութիւնը, ըսելով. «Վերջարանին տնկապ զբերը կը յօդեն ԱՅՍ ԲԱՆ ԵՐԵՄԻԱՅԻ»: Հ. Աղինեան կը վկայէ որ Երեմիայի այս զործը կը գտնուի «Ձեռագիրներ՝ Երուսաղէմ, Ս. Յակոբեանց Մատենադարանի թիւ 605բ (1671, անխորազիր), 959, էջ 805 (1776): Հաւաքածոյ հայերէն ձեռագրաց Լ. Բայրութեանի յԱխլիսա (Տեսած եմ 1925 Օղոստոսին): Կը յիշուի նաեւ ի Ձեռագիրս Մխիթ. Մատենադարանի, ի Վենետիկ» (էջ 121): Յարկելի՝ Հօր անծանօթ մնացած է իմ զբնագիրս:

Հ. Աղինեանի յիշած Երուսաղէմի թիւ 605 ժողովածուն, ուր արդարեւ կայ Մապէթայ հրէայի ոտանաւորը, որոշ չէ իրր 1671ի զբնագրին: Հոն, իրաւ է, կայ յիշատակագրութիւն մը Գրիգոր վարդ. Տիւղրանակերտցիէ. սակայն հոն տրուած ՌՃԻ (1671) թուականը կապ մը չունի զբնագրեան հետ, և կրնայ թուականը ըլլալ Գրիգոր վարդապետին առաջին անգամ Ս. Յակոբայ տաճարին մէջ ծառայելուն, երբ արեւոյ եղաւ:

Մապէթայ մասին Երեմիայի ոտանաւորը հրատարակուած է Կ. Պոլս, անթուական, փոքր ութածալ 20 էջոց պրակով մը, որուն մէջ վեց տուն և վերջէն 19 տուն չէ հրատարակուած, թէեւ այլապէս նման է: Եւ որովհետեւ տպագրու-

թիւնը թէ՛ պակասաւոր և թէ՛ այժմ անգլիա է, կ'արժէ որ հոս հրատարակենք Երեմիայի հետաքրքրական այս զործը, որուն արձակը տեղ գտած է նոյն իսկ Առ. Դավրիժեցիի պատմութեան մէջ:

Ահա իմ զբնագրիս օրինակութիւնը, եղածին պէս.

Մապէթայ անուն հրէայ ոմն յայտնեալ,
Ղարայ Մենթէշի որդի անուանեալ.
Որ էր միանձի և թէլլալ անդ լեալ.
Յիզմիւրին քաղաք զսապէթայն ծնեալ:

Անդ սրնեալ ապայ և յօդէն վարժեալ
Ըստ ազգին իւրոյ զրոց հմտացեալ.
Մեկնութեանց լուծմանց զանուն ստացեալ.
Իրր յաղթող հարցմանց պատասխանատրեալ:

Աշակերտս անդէն բաղումս ժողովեալ.
Ապայ և համբաւ նշանից ցուցեալ.
Ձանուն Աստուծոյ անդադարձ զբերեալ,
Ընթանալ իւրոցն այսպէս ուսուցեալ:

Յորժամ ընթեռնուին սարսեալ զողացեալ.
Ջրովք սրսկման զնոսին իրր բուժեալ
Ատեան իւր կաղմեալ զխախտման կոշեալ.
Եկայք խօսեսցուք ի զրոց ձեզ բացեալ:

Ի Երուսաղէմ եղեւ զնացեալ
Ձնոյն իմաստ բանին արծարծել կամեալ,
Իրրու մեծ ոմն է զպատիւ պահանջեալ
Գուցէ որսայցէ զազնն որ անդ գտեալ:

Ոմանք որ եղեն նըմայ հաւանեալ
Սակաւ առ սակաւ լինէր հռչակեալ
Փոքր ինչ իմաստուք ազանդ ինչ ցուցեալ
Ձիւրմէ տայ ասել իրրու մեծ ոմն է լեալ:

Բօրգօղալցի ծեր ոմն որ անդ գտեալ.
Բժիշկ և իմաստուն զրոց անդեալ լեալ.
Ձմեծամեծ ոմնս ընդ իւր և առեալ
Ձսապէթայն սաստիկ նա զատապարտեալ:

Քարոզ կարգացեալ թէ սայ է մուկեալ
Անդէս և աննշան կամի զինք ցուցեալ
Լիւր և յանդուզն է մանուկ մուրեալ
Կամի զազն մեր ընդ իւր և քարչեալ:

Քամահեալ զնա և խաղաղակեալ
Եւ բոնկալաց մատնել կամեցեալ.
Եւ նա իսկ ծանուցեալ ըզփախուսան առեալ.
Յերուսաղէմէ եղեւ հաւանեալ:

Մապէթայն խոցեալ սրտիւ մորմոքեալ
Երբ միայն չկարէր ինքն մեծարեալ
Ի զազն իջեալ զնաթան ոմն գտեալ
Ի խորհուրդ մտեալ նովաւ ուխտագրեալ:

Ըզրազում աւուրս միտեղ կացեալ
Նաթանայ ասէր զու ինձ քեսող լեալ
Յորժամ մեծութեանս լրումն հասեալ
Ձեզ կեսառ առից ինձ համապատուեալ:

Նաթան սակս նորա հրէից դուշակեալ
Յախարհէ աշխարհ ըղնա հռչակեալ
Ձօր և ժամանակ խորհրդով ցուցեալ.
Սակս Սապէթային պատգամս հանեալ:

Գրեց զնմանէ թէ նայ է ընտրեալ
Որ իցէ առ ձեզ զոր դուքն ոչ ծանեալ
Նա որ փրկութիւն աղղիս մեր հասեալ
Յիզմիւրին Լիկեայ օծեալ արդ յայտնեալ:

(Կարմրաւ) «Վասն դառնալոյն ի յիզմիր եւ որսալ զփառսն»:

Սապէթայն դարձեալ ի յիզմիր եկեալ.
Իրրու թէ զնաթան բընաւ չիք տեսեալ.
Անուան իւր կընիք այսպէս փոխադրեալ.
Մահ հետէն Սապէթայ օծեալ:

Փառս և ի մեծարանս օր աւուր պատուեալ.
Յընթացս զընացիցն բնեղ տարածեալ.
Ղուճաւ և կերպաս յանցսն ընծայեալ
Յարկ առ յարկ յընթացս ըղնա մեծարեալ:

Ձգրապան զգետնիցն ի ձեռս ամբարձեալ
Ձկնիւ ընդ առաջ դրոհք բաղմացեալ
Հովանիք վլխոյ նորա վեր առեալ
Եւ աշխարհ զկընի նորա զընացեալ:

Ձանհաւանս ասեն տանջել քարկոծեալ
Բաղումք յերկիւղէ բոնի հաղանդեալ
Մեծամեծ խախտք ի խոր սուղ մտեալ
Եռակ մեծ խախտք ի նընթ թաքեալ:

Եռակ կոյս աղջիկ նմա մատուցեալ
Ըստ ժամանակին զնոսին և թողեալ
Բայց հեռաստանէ արդ նոր ընծայեալ
Գանձիւք և զարդուք ռամկաց զնա լցեալ:

Ազգ իւրեանց ի թուղթ և ի դիր աշխատեալ
Ձայս բան աշխարհի չընաղ հռչակեալ
Աւետիս զերեալք ցրուեալք տառապեալ
Մապէթայ փրկիչ արդ յայտնեալ:

Մանկունք և աղջկունք այլ և ախտացեալ
Ուշաթափ եղեալ խելադար խօսեալ
Ձրստ ժամանակին զրոյց զայս հանեալ
Մապէթայն յայտնեալ փրկիչ մեզ հասեալ:

Թողաւոր զուղ յիզմիր երեւեալ
Օրհնս նորոգեալ զաւազան ծաղկեալ
Ըզմեղ ապատեալ ազգօք ճոխացեալ
Եւ իսրայելի ցրուեալքն ժողովեալ:

Ձրանս ախտացելոց նստարք զրեալ
Սակս դիւահարին զվկայս զայնք ցուցեալ.
Ի բերանոց մանկանց փոփոցայն հաստեալ.
Ձսոյնսպիսիս նրման հաչեալ զանդաջեալ.

Բռնաւորք տեղոյն լուեալ եւ տեսեալ
Ասեն զրեսցուք վէղիւրին ազգեալ
Ձախորժեն զայն ինչ եւ յաչինչ հաչուեալ
Տուգանս առեալ շատ եւ ոչ փութացեալ

Այսր եղեալ հրէից որ էր հոչակեալ
Ձղոյս եւ ստացուածս ի ծախել սկրսեալ.
Իրր յերուսաղէմ երթալ կամեցեալ.
Ձի ցրուեալն ազգին առ նա ժողովեալ

Յորժամ զինչս նորա ի իստքեօյն բերեալ
Յանցսն ինդրէին զայն ողջադուրեալ
Հեռուստ է ի մօտոյ զձեռս են տարածեալ.
Փրկութիւն յուսով անտի արկեալ:

(Կարմրաւ): «Վասն հոչակելոյ զմեանք ի մէջ քա-
ղաքիս եւ կատակումն ազգին. եւ բռնաւորք իդ-
միբու վէղիւրին ծանուցեալ զոր եւ կապանօք բե-
րեալ աստ զմեմ ի բանտի»:

Իմաստնոց զխնաց ի սիրտն ծածկի
Երկնչին թէ բանն յարգունիս հասնի.
Բայց խաժամութեն խնոյն արծարծի.
Ծանակ եւ կատակ ազգն խիստ լինի:

Մանկունք ընդ մեծամեծս ի համայն ազգի.
Փարթամք եւ ռամիկի ի սոյն քաղաքի.
Հարցանեն նեղեն զազգն հրէի.
Ձփուտ կէլտի մի խախամ կէլտի մի:

Կանայք ընդ արանց և երիտասարդի.
Մանկունք եւ աղջկունք ծերք ընդ տղայի.
Հարցանեն ցհրէայս ուր որ հանդիպի
Նաւի կէլտի մի թէճալ կէլտի մի:

Ի յառակս արկեալ համայն աշխարհի.
Ձաղեն կատակեն ուս՝ և ի փողոցի.
Բերանք եւ լեզուք ի յայս միշտ մարդի.
Նէպի կէլտի մի մսիհ կէլտի մի:

(Յաջորդ վեց տուները հրատարակուած օրինակին
մէջ կը պակսին: Յ. Բ.):

Ի տունս և ի փողոցս նոյն յիշեալ ճառի.
Երգս եւ խաղ չինեալ նորուն պատճառի.
Ծաղր եւ նախատինս սուտ մարդարէի.
Քէզապ կէլտի մի. եէզիտ կէլտի մի:

Ղատին ու սէրտարն ազգեալ վէղիւրին.
Նա կամէր փախչիլ թէսաթիւկին
Յայսրէն մարդ հասեալ կալան ի ծովին.
Եւ զնա կապանօք իստամպօլ բերին:

էր Ռ. Ճ. Ժ. եւ Ե. (1666) թրվին.
Ի քսան եւ յուրն ամսոյ յունվարին.
Կալան ի ծովեզր մերձ մարտատանին.
Հաղարք հաղարաց ի տեսն երթային:

Տանին առ վէղիւրն եւ նա հարցանէ.
Նա յանդետս եղեալ զայս պատասխանէ.
Այր եմ վերձանօղ մէջ ազգիս ասէ.
Եւ չիք ինձ բաժին զոր աշխարհս է:

Վէղիւրն անդրադարձ նմա զայս առնէ.
Եթէ յիշմիւնոյ վկայել մարթ է.
Յայնժամ նշաւակ առնեմ զքեզ ասէ.
Որպէս նմօս մեր եւ զիրք հրամայէ:

Տարան ի զնտան յաւուր Կիրակի
Նոյնքանին ամսոյ զոր վերոյ զրեցի.
Սուպաչին ածեալ ապտակ յերեսի.
Յոյժ կշտամբանօք կալան ի բանտի:

Դըզըրդեալ քաղաքս ի տեսն նոյն չարի.
Եւ ազգն հրէից յարկս իւրեանց ծածկի,
Ոչ խանութ նստան և ոչ ի վաճառի.
Ի նախատանաց ամենայն ազգի:

Ենկիւնէր աղին կաշառըս տուին.
Որ պատուէր տուեալ խիստ ի դուլլուխին.
Այլ մի ասացեն հրէից զկէլտի մին.
Բայց ազգն տաճկաց այլ եւս յաւելին:

Ոմանք թէՖթիւնէք ի բանտն մտեալ.
Հարց եւ փորձ առնեն զուն զքէն զի ասացեալ.
Ասէ չեմ որպէս աշխարհ կարծեցեալ.
Տեսող կամ դաւոյց զամն որ ձեր հարցեալ:

Գըբեն եւ վճռեն ի հօճէթ առեալ.
Տանին առ վէղիւրն աւուրս ինչ ծածկեալ.
Բայց հրէայքն ի յերթ եկան յաճախեալ.
Յուխտ և ողջոյն նմա դաւոյց դու ես լեալ:

(Կարմրաւ): «Վասն խուժանին հրէից կուտելոց ի
բանտին. եւ վէղիւրն ախորէ գնա ի բերդն Պողազի:
Եւ դարձեալ երթային առ նա ծովով ցամաքով.
Եւ բռնաւորք գան հարկանէին զնոսայ»:

Յաւուրս յայտոսիկ շատ լեզուազարեալ.
Ի համայն ազգաց հրէայք չնջեալ.
Մինչեւ զսուպաչին նոցա կաշառեալ.
Որ նա վէղիւրն հնարուք ծանուցեալ:

Ասէ որ հրէայքն զբանտն ի կոխ առեալ.
Ըզմեղ եւ զորս անդ յոյժ ձանձրացուցեալ.
Վէղիւրն զՍապէթայն բանաչն աքսորեալ.
Ի Պողազ բերդին պնտեալ արդիւեալ:

Վէղիւրն ի Կիրիտ ի մարտ էր դիմեալ.
Հրէայք ի Պողազն առ այն հետեւեալ.
Արք կանամբ մանկամբ եւ ընդ նորածնեալ.
Անարդեւ աղջկամբ յողջոյն փութացեալ:

Ի լէհաց կողմէ ի Ղրիմայն յերկրէ.
Պարսից աշխարհէ և յերուսաղէմէ.
Ի Միջերկրեայէ ի Ֆրանկաց տանէ.
Աւել յանդունեալ ի մեր քաղաքէ:

Երթային դային ծովով ցամաքով.
Ձաւրհնութիւն նորա զաղօթս խնդրելով.
Ակնարկեալ նմա փրկութեան յուսով.
Երբ դայցես առ մեզ թաղաւորելով:

Պօստանճի պաչին զնոսա էր դիտեալ.
Չեկեալըս նաւուք ի ծով արդիւեալ.
Չմեծամեծս նոցուն ցղայմախամն մուծեալ.
Որ նա ցնոսա հարց ի փորձ մտեալ:

Ասեն իմաստուն վերձանօղ ոմն լեալ.
Աղօթիցն կարօտք որք ի մէնջ դիմեալ.
Կամ պատիւս նմա որ կայ զնտանեալ.
Ղայմախամն այսու զնոսա արձակեալ:

Ձօրք որ ի դրանն զնոսա կատակեալ.
Յեկողէն զինչ շահ դաւոյց ձեզ ասացեալ.
Եւ հրէայք նոցա զայս պատասխանեալ.
Մերձ աւուրս աչք ձեր տեսցեն ըզեղեալն:

Ձայս զայմախամին ի վեր աղբ առեալ.
Չհրէայնս դարձուցեալ եւ խիստ զանաչարեալ.
Եւ որք զոր լուան յահ և ի սուղ մտեալ.
Բայց հանուրց ասեն յոյսն մեր մերձեալ:

Ճարտասանք բազում պէսպէս բանն հանեալ.
Երգս և ոտանաւորս ըստ ոճին չինեալ.
Ծերոց եւ տղայոց ի բերան առեալ.
Ի տունս և ի փողոցս ոգեալ եւ երգեալ:

Ձօստանճի պաչին դարձեալ կաշառեալ.
Ձկամս նախարարաց կրկին հաճեցեալ.
Ի յերթեկոյ անդր ոչ դադարեալ.
Ձաղիւ զինչս իւրեանց նմա ընծայեալ:

(Կարմրաւ): «Վասն քրիի Սապէթային առ հրէ-
այս քէ եւ եմ ըստ գրոց մարգարէից. փոխելով
գտօն Ղարայ Պայրամին ի տօն ազատութեան: Եւ
ղիւսհարին բազումք ի գիշերի ի գծով շրջեալ»:

Մուրեալ երբ ետես զազգն մուրեալ.
Կուրացեալ խմբիցն աւել յանդունեալ.
Ասէ եմ որդի աստուծոյ ծնեալ.
Ձեզ ազատութիւն նարդենիս հասեալ:

Հնդկաստան լեալ լուանին օգոստեայ.
Որ Ղարայ Պայրամ տօն ցնոսա կուցեալ.
Երուսաղէմայ աւերն է եղեալ.
Ի բարեւոյցոց առ նոսա հասեալ:

Ձորոյ յիշտակ սրբոյն կատարեալ.
Ծոմով եւ պահօք զօրն զայն ցուցեալ.

Երեմիայ ողբովք ընթերցիւք յարդեալ.
Օրէն յաւիտեան ցարք եւս չմոռացեալ:

Սապէթայն ազգին թղթերս առաքեալ.
Եւ չքնաղ իր իմն նոցա համբաւեալ.
Թէ զտօնս հնոյն այն տրտմութեան բարձեալ.
Տօն մեծ խնդութեան առջիք բերկրեցեալ:

Ձի ցարդ եւ որ սուղն էր ձեզ պաշարեալ.
Տիրութեան կայիք փրկութեան սպասեալ.
Ես ի սոյն աւուրց փրկութիւն ծնեալ.
Տօն ազատութեան առէք ցնծացեալ:

Ձայն որ Արբահամ որդովքն ցանկացեալ.
Ձուխտըն տեսանել զոր տէր այնց ուխտեալ.
Արդ զօրս զայս զատիկ առջիք խրախացեալ.
Ձոր վայելչութիւն ազգաց ձեզ տուեալ:

Գիր մուրեկոյն ցոր վայր եւ հասեալ.
Ձօր սրբոյն այնմիկ ցնծութեամբ առեալ.
Մինչ թմրկօք նուազօք էին յանդեալ.
Որ երբէք զհրէայս այսպէս չիք տեսեալ:

Յիրիցանց նոցուն մեր տեղակացեալ.
Իրբեւ արք .Ձ. (80) ընդ այնց ոչ հաճեալ.
Ասեն փոփոզաց և օրինաց կարդեալ.
Աւանդ այս նախնեաց մինչ ցմեղ հասեալ:

Ձհարց մերոց սահման դու բերդանց առեալ.
Ձիւրովի ումեմն բանից հաւանեալ.
Իմաստունք եւ մեծք ցմեղ շատք եկեալ.
Մինչեւ ցարդ կարդ ինչ ոչ են աղարտեալ:

Նայ զինչ մէվճուգաթ մինչ յօրս մեղ ցուցեալ.
Այլ փախուտ զիմեալ ի բանտ զնտանեալ.
Կրկին աքսորեալ յարդեալանս մնացեալ.
Այլոց չեմ ասէ զոր դուք էք կարծեալ:

Սուտ է խարբայն նա դիւարախեալ.
Ձունին ինչ նըշան զոր դուք յուսացեալ.
Կամ զմարդարէից բանից զուշակեալ.
Ոչ տեսաք զմի ինչ ի նմայ կատարեալ:

Ձայս բան որ ասին .Ձ. (80)քն մեծարեալ.
Համայն ժողովուրդն նոցուն ընդվզեալ.
Անդոսնեալ զնոսա կամել քարկոծեալ.
Եւ Սապէթային զնոցունց զանկատեալ:

Սապէթայն զամբոխն որ աստ իսկոփեալ.
Մեղադրանս եւ աստ Ձ (80)ից զըրեալ.
Թէ ընդդիմանայք ինձ. հակառակեալ.
Որ իմ առաջին էք դուք ընդվզեալ:

Այս բազում հերձուած ցնոսա յաճախեալ.
Խաժամութն սիրով առ նայ կապակցեալ.
Այլ եւ մեծամեծք յուսով ախարկեալ.
Երթային դային զնա անդ ողջունեալ:

Եւ ըզկերպըս Հայոց ի յերթն ստացեալ.
Ձի մի յաւել լիցին հայհոյեալ.
Բայց ի խուզողացն էին տուգանեալ.
Ի տաճկաց մեծաց որ այնց հանդիպեալ:

Եղբայր յեղբորէ կին յառնէ մերժեալ.
Հարսունք յի կեսրաց էին տարադրեալ.
Չանարդանս հանուրց աղղաց յանձն առեալ.
Ծովով ցամաքաւ անդ էին դիմեալ:

Յուլովք ընդ ցերեկն մատչիլ չկարացեալ.
Երկամբք տքնութեամբ ըզդիւշերն մտեալ.
Ձքնաղ սքանչելիս սակս նմա պատմեալ.
Միմեանց զառասպէլս էին աւետեալ:

Խօթացեալք եւ ծերք երթալ չկարացեալ.
Փոխան ողջունին իրր պատգամն հանեալ.
Սապէթայ Մսեհ արդ առ մեղ եկեալ.
Աղատիչ յայտնեալ փրկիչ է հասեալ:

Ջնջէ դրբիստիանս եւ ինքն տիրեալ.
Չտաճիկս ընդ բռամբ հարկատու առեալ.
Արքայադահնգ զգրուանս ինքնին բացեալ.
Անդ նստցի Մսեհ Սապէթայն օծեալ:

Չայս երեկոյի եւ առաւօտեալ.
Տանց պատուհանաց յերկինս պըշուցեալ.
Ի ծով դիտելով իրր ակնկալեալ.
Բաղկաց տարածեալ ձեռք աղերսեալ:

Չղուխս ամբարձեալ խաղս առեալ պարեալ.
Ճապկտուիլ անձամբ ճոճեալ ծոճոկեալ.
Չատամս կըճտեալ զբերանս փրփրեալ.
Ի դետնի անկեալք եւ այսալըլկեալ:

Չցերեկ յայս ցնդեալ յայս հող պատողեալ.
Եւ զիւշեր նաւուք ի ծովու չըջեալ.
Յերկինս նըկատեն դալըստեան սպասեալ.
Թէ թոչի եւ զայ մեղ նա լոյս ծագեալ:

(Կարմրաւ): «Վասն խաւարելոյ արեւուն յաւուրս
յայտոսիկ գոր հրէայք ճշան գուշակեմ՝ քէ ահայ
լցաւ պայման տիրապետելոյ գտիեգերս. եւ լուրն
տարածեալ ընդ ամենայն աշխարհն քրիստոնէից
վիճարանեալ ընդ հրէայսն»:

Ազգն մուրեկալ եւ յոյժ տառապեալ.
Տեսեալ զնոսա եւ բան դուշակեալ.
Ասեն այն բանք են զոր այժմիկ հասեալ.
Չոր մարդարէի պատգամն վըկայեալ:

Իրր յաւուրս յետինս յողոյս իմ չնորհեալ.
Ի վերա որդոց դստերաց հեղեալ.
Տեսիլըս տեսեալ մարդարէացեալ.
Երազովք խօսեալ եւ այնթ դըրեալ:

Ոմանք մարդարէ նըմայ ասացեալ.
Եւ կէս թէ մեծ ոմն իմաստունս յայտնեալ.
Բաղումք թէ յերկինս ելեալ իջեալ.
Եւ թէ փրկութիւն սա արդ մեղ հասեալ:

Յունիսի .Բ. արփոյն խաւարեալ.
Որ ի ծնունդ լուսնի ժամուն հանդիպեալ.
Հրէայք իրր զուշակ նըշանս հոչակեալ.
Հաց եւ կերակրօք էին պատրաստեալ:

Յօրէ յառաջմէ զայս հանուրց աղղեալ.
Թէ մեք տիրեացուք զի օր է մերձեալ.
Ուժդնութիւն աղղաց առ մեղ նուաղեալ.
Եւ մեր տկարութիւն յարդեալ զօրացեալ:

Առ մեծ նշանիւս սակս մեղ դուշակեալ.
Մեր Սապէթայիս լիցուք իշխեցեալ.
Համայն աշխարհի մեր թաղաւորեալ.
Դալոց ընդ դաւանց ի զոյլ ճարակեալ:

Ի սոյն օր յաղմաց ի տունս մնացեալ.
Եւ ի յերկիւղէ նոցուն կասկածեալ.
Ձի խուժանք հրէից եւ զէնս պատրաստեալ.
Թէ լիցի հընար զայլաղղիս ջնջեալ:

Հոչակ այս լինէր համայն աշխարհի.
Վասն դալտեանս սուտ մեսիայի.
Վէճ եւ դաւ լինէր ընդ հրէից աղղի.
Ի թաղաւորութիւնըս քրիստոնէի:

Երբ հրէայք պայման զնէին սակաւի.
Քրիստոնեայք նոցա կրկին աւելի.
Ի ընու պայմանին եւ նորոյ ուխտի.
Քրիստոնեայն հրէայ լինել յօժարի:

Եւ թէ խօսք նոցա վասն այնմ չստուղի.
Չհրէայս մաշեցեն ի սուր սուսերի.
Եւ ոչ բնկալցին թէ մկրտեցի.
Այլ յերկրէ բընաւ աղղօք ջնջեցի:

Ի դիր առնէին զամիս եւ զտարի,
Չօր եւ ժամանակ յոր պայման դընի.
Վկայիւք վճռեն ի մէջ հանդիսի.
Ի յաշխարհական մեծի տիւանի:

Տիւանաղղիք հանդէս կանգնեցան.
Եւ իմաստասէրք ի մարտ դիմեցան.
Նօտարք արբունեաց ի դիր խոնջեցան.
Կնքեն դրոշմեն մատամբ արբունեան:

Յաշխարհին լէհաց չատք կոտորեցան.
Եւ կէսք յերկիւղէ յայս խուսափեցան.
Յայլ աշխարհ սփռեալ եւ տարադրեցան.
Այլք եւ նոյն յուսով առ նայ խմբեցան:

(Կարմրաւ): «Վասն յանդիմանելոյ. եւ գուժա-
բելոյ հրէայիցն ի Պողազ. եւ բնակիչք տեղոյն զըզ-

ուեալ երբալ յետրեմէ ազգէն բաճակալաց խախտմն
ումն նախատեալ զՍապէթայն երբալ յետրեմէ.
տաճկացաւ եւ ծանոյց մեծամեծաց գաւառիւն մո-
րին»:

Յայլմէ աշխարհէ խախտմ մի եկեալ.
Որ ընդ հրէայս անդ շատ մաքառեալ.
Թէ սուտ է այրն այն յոր դուք հաւանեալ.
Ես երթայց տեսից զպատճառէն կընքեալ:

Եկեալ խախտմն այն առ նա մըտանէր.
Ասէր դու ընդէր զաղղս մուրեցեր.
Եւ զբեղ մեսիայ դու քարոզեցեր.
Ձինչ էր հրաշքն քո որ յանդէնցեր:

Ծննդեան եւ սննդեանդ զոր սքանչացուցեր.
Ահա զեղբարս քո զորս յիշմիր թողեր.
Ահայ կանայք քո զորս զարդուք լցեր.
Ահայ եւ կրկին ի կալանս մնացեր:

Յերկինց զոր նշան դու մեղ յայտնեցեր.
Եւ կամ ի յերկրէ որ մեղ քեւ ցուցեր.
Ձինչ դորժ փրկութեան մեղ ներդրո՞նցեր.
Ըստ բանից պատգամաց եւ նօժօսաց մեր:

Ժողովք Սապէթին զլէհցին կշտամբեալ.
Երդիծեցուցեալ եւ յոյժ անարդեալ.
Յորոց սրտմտեալ զօրէնսն ուրացեալ.
Իսկոյն տաճկացեալ յետրէնէ ելեալ:

Մտանէ ընդ չէյխսն ուր պատրաստ դտեալ.
Ձիրս Սապէթային նոցա աղղ առեալ.
Որք զայմախամին իսկոյն ծանուցեալ.
Որ նա ի Պողազն մարդ առաքեալ:

Կրկին եւ պատճառ իմն այսպէս եղեալ.
Մահմուտ չէյիս ոմն որ ի Պողազ եղեալ.
Նա դատաւորէն արդ մահաւոր առեալ.
Մեծամեծ տաճիօք յետրէնէ հասեալ:

Չհամարձակութիւն հրէիցն պատմեալ.
Չփառս եւ զմեծարանս խախտմն տուեալ.
Սէրտարն կաշառոց նոցանէ զիջեալ.
Որ նա կանամբ իւր ի պատուի բազմեալ:

Յղիութիւն հացի մերոյ է նուազեալ.
Փոքր եւ նեղ վայրիս տաճկաց սով տուեալ.
Մինչ ի ճուս հաւոց մերոց պակասեալ.
Խմբելոց հրէից որ առ նա ճէպեալ:

(Կարմրաւ): «Վասն տանելոյ կապամօք Սապէ-
թայն առ քաղաւորն և անդէմ գորէմս իւր եւ գու-
մումք ազգին ուրացեալ տաճկացաւ»:

Հափուճի պաշի ի Պողազն հասեալ.
Ձի անդէն զնա փութապէս կախեալ.
Բայց զայմախամին զայս իմն ծանուցեալ.
Եթէ անդր ընայ մի լիցիս սպանեալ:

Ձի աղղն հոչակեն զայն յերկինս ելեալ.
Եւ այն ալ ոմն է որ եղեւ սպանեալ.
Յաղաղս սոյն բանից կրկին մարդ յղեալ.
Եւ զնայ կենդանի յետրէնէ տարեալ:

Ըզկէլիպօլ Սապէթայն տարեալ.
Հետեւեալքն հրէից դեռ եւ յոյս կալեալ.
Եսասխճոց դըրամ եւ փողըս մսխեալ.
Սակս տեսանել զնա չըտեսքն յիմարեալ:

Տանին յետրէնէ ցղայմախամն մուծեալ.
Եւ նա առժամայն ոչ խօսեցուցեալ.
Ի պալատն արքունի իսկոյն առաքեալ.
Որոյ եւ սակի քաղաքն զըզըրդեալ:

Անդ զայմախամին իւրովք ժամանեալ.
Եւ զաղի ասքէրք ընդ մուհտոյն հետեւեալ.
Հանդէպ արքային մեծամեծք հասեալ.
Ցանց ճանապարհին ումք ի տեսն խմբեալ:

Անդէն քէմանքէջ սակս նմա կանգնեալ.
Եւ կուռ նետամիդ նմա պատրաստեալ.
Լուցելոյ զամբարս նմա հանդերձեալ.
Եւ տանջանարանս սակս նմա կաղմեալ:

Քանդի ասէին հուր այնմ ոչ աղղեալ.
Թէ ի ջուր արկեցն մի լիցի խեղդեալ.
Ձէն ու սուր զմարմինն նորա ոչ դըժեալ.
Այլ զտանջանարանս համայն խորտակեալ:

Հայաթ զատէ ոմն հրէայն կոչեալ.
Որ էր տաճկացեալ թարգման անդ հասեալ.
Խօսի ընդ Սապէթայն եւ զիրան ծանուցեալ.
Թէ զպատրաստութիւնս սակս քո արարեալ:

Դու որ նոր բանիւ զաշխարհ դըզըրդեալ.
Արքայն նոր մահուամբ կամի զքեզ սպանեալ.
Քէրամէթ ունիս անուանդ հոչակեալ.
Արայ եւ փրկիր զաղղ քո եւս փրկեալ:

Սապէթայն եւ անդ ի յուրաստ եղեալ.
Չառմունք աղղին իւր և այլոցն ուրացեալ.
Իսկոյն սիրտ ջհտին փուռ յարին դարձեալ.
Յահարեկ եղեալ եւ հողին չըջեալ:

Ասեն եւ ապայ զքէն դու զի ասացեալ.
Որ աղղօք եղէք ի դոյն փայրհեալ.
Ասէ զՍապէթայն աղղն իմ զայս հանեալ.
Չանուն զայս անդէպ վասն իմ հոչակեալ:

Եւ իմ համայն զդիրս մինչ ցարդ ընթերցեալ.
Եւ տեղեկացայ յայն հասու եղեալ.
Որ մարդարէն ձեր սակս հանուրց եկեալ.
Եւ այս .Ի. (20) ամ որ զայն ընդունեալ:

Յայնժամ եւ ակը մեր զդօրութիւն ցուցեալ.
Որդին Մարեմայ զնա նըշանակեալ.
Յիսուսն իմ աստուած զվրէժ իւր առեալ.
Եւ զսուտ մարդարէն անդ խոյտոտակեալ:

Պիղծ Սապէթային սատանայ կաղեւալ.
Որ ի ձախ կացեալ նմա պաշտպանեալ.
Ի յայնքմ պահու ընդ յաջ էր անցեալ.
Եւ լէզէօնեանք ըզնա պաշարեալ:

(Տպագիրը չունի այս տունէն մինչեւ վերջ):

Սուրբ կոչիւր աղբին բարի քարոզեալ.
Կիտին ժողովուրդ Մահմէտի եղեալ.
Չմեխայ անուն էր ձեռն իրեցեալ.
ՉՄովսէս ուրացեալ եւ տաճիկ դարձեալ:

Ձի սկըզընաչարին դործարան դառեալ.
Որ սատանայի դէործն յաւարտ առեալ
Եւ ըզխեղձ աղբ իւր ի լեզու արկեալ
Ձի համայն աղբիք զհրէայս ծանակեալ:

Եւ հրաման փրկչին յայսմիկ կատարեալ
Ձի սուտ մարդարէք քրիստոսք յառաջեալ
Ահայ նախընթաց նեռինն այս հասեալ
Որդւոյն կորստեան կարապետ յայտնեալ:

Ձկին Սապէթային Պողաղէն տարին.
Եւ զորս ընդ նմա անդ տաճիկացոցին
Ի տեսս ուսմիաց զնա մեծաբեցին.
Ղափուճի պաշի կարեալ արքային:

Ետուն ի դարոց ցլանի էֆէնտին.
Դասակից եղեն ընդ Կլընպողին.
Եւ եւս զի հրէայ մի տեսցէ բնաւին.
Ձի խոր թուրքասցի զգայրանք ջհտին:

(Կարմբաւ): «Աւարտումն բանիս եւ դաւանու-
թիւն. երգոյս երգողի յիշատակարանաւ»:

Այլ ես դաւանիմ եւ խոստովանիմ.
Ըզհայր եւ զորդի եւ ըզսուրբ հոգին.
Ի միակ բնութիւն եւ յեռակ անձին.
Համայնից ստեղծող տէր եւ թաղաւոր:

Յորոց մինն անձանց որդին միածին.
Գոլ անթամանակ անմայր ի յերկին.
Իջեալ ի յերկիր ի յարգանդ կուսին.
Եւ անհայր ծընաւ ժամանակաւոր:

Սոյն ծընունդ մաքրական եւ անապական.
Անտերմն էր յղացումն եւ սքանչելական.
Անախտ զոլ կընքոյն ի յետ ծննդեան.
Մայրըն կոյս մնացեալ հրաշիւք փառաւոր:

Բացթեալ հովուացն փառօք յայտնեցաւ.
Յերկնայնոց դասուցըն փառատրեցաւ.
Մոզուց պատուեցաւ երկրպագեցաւ.
Ընկալեալ զընծայն մեծ խորհրդաւոր:

Աւրէնսգիր տէրն ի յօրէնս մտեալ.
Ձի քառասնաւորք ի տաճարն եկեալ.
Չզուռն ինքնին բացեալ զկապեալն արձակեալ.
Դաւանումն ծերոյն լոյս եւ լուսաւոր:

Նորն Աղամն եկեալ զհինն Աղամ սրբէր.
Իջեալ Յորդանան ծառայն մկրտէր.
Որդի սիրական հայրըն վկայէր.
Ընդ հօր եւ հոգոյն աստուած զուգաւոր:

Եղեւ օրինակ մեզ խոնարհութեան.
Եղ մեզ ճանապարհ սիրոյն բարութեան.
Աւետարան էր զիւրոյն տեսութեան.
Ձի յինքն յօղեսցէ զիւր նըմանաւոր:

Բամ մեղաւորաց զմեղանսն քաւէր.
Չրորոտաւ սրբէր կաղբս զնացնէր.
Հիւանդս բժշկէր զկոյրս լուսաւորէր.
Չմեռեալս յարուցեալ աստուած զօրաւոր:

Ելեալ ի խաչի կամաւ բարձրացաւ.
Ետ դարիւնն ի դին աւար զմեզ առաւ.
Բացումըն կողին բնութիւնս բաժրացաւ.
Որպէս զաղբակից եւ ժառանգաւոր:

Մահուամբ կենսատուին մահըն մեր լուծաւ.
Յարութեամբ նորին կեանք մեզ շնորհեցաւ.
Համարածամբն յերկինս բնութիւնս բարձրա-
ցաւ.
Ընդ աստուած հաղորդեալ քան զհրէտակս աղ-
վոր:

Ի սոյն կանոնի որք միարանին.
Սուրբ փառաց նորա արժանաւորին.
Որպէս խոստացաւ թէ ուրեմն լինիմ.
Պաշտօնեային իմ անդ զոլ սեղանաւոր:

Աւուրն յետնումն որ դայ ի դատել.
Թէ բարի կամ չար որք կան աստ դործել.
Ըստ դործոց հանուրց վարձս փոխանորդել.
Որպէս թաղաւոր տէր եւ դատաւոր:

Յուսով սոյն կապեալ ծառայս յիսուսի.
ԵՐԵՄԻԱՍ կոչեալ ԴԱՐԱՆԱՂԵՅԻ.
Նախնեաց պանդխտեալ արդ Բեզանդեցի.
Ի խնդրոց բազմաց դայս շարադրեցի:

Ի սուրբ աղօթս ձեր յիշել զիս զերի.
Ձի տեսն յիսուսի մեզ հանդիպեցի.
Ներել զանցանս մեր եւ զձերըզ ձրի.
Արժանաւորիլ փառացն արքունի:

«Աւարտումն բանիս...» մասէն սկսեալ
տանց սկզբնատառերը կը կապեն ԱՅՍ
ԲԱՆ ԵՐԵՄԻԱՅԻ: Ինչպէս ըսինք, այս
մասը, ինչպէս նաեւ անկէ առաջ հինդ
տուն, հրատարակութեան մէջ չկայ, ինչ-
պէս նաեւ 30րդ տունէն մինչեւ 35րդ տու-
նը չկայ հրատարակութեան մէջ:

(Շար. 2)

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ԶԱՐԾԱՀԱՆ ԳԱՒԱՌԻ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

(Շար. տե՛ս «Բազմավէպ» 1967, ք. 1-2, էջ 24)

Շան կծածի դէմ

Վրան դնել անալի պանիր կամ նոյն
պանիր մէջ դնել սեւ շալի փող (դրամ):
Երբ պանիրը ժանդ բռնէ, դնել վէրքի վը-
րայ: Կամ՝ շան մաղից կտրել, այրել,
տրորել եւ դնել կծած տեղը:

Անգնութեան դէմ

Երեսարբիչի մի ծայրը ջրով թրջել,
պառկելիս՝ դնել ծոծրակի վրայ եւ ծած-
կել նոյն երեսարբիչի չոր ծայրով, որ-
պէսզի թացութիւնը չուտով չանցնի:

Ուշփից գնալ (նւաղել)

Իսկոյն պառկեցնել, չորերը (զգեստը)
արձակել եւ երեսին սառը ջուր սրսկել,
իսկ երեսն ու մարմինը ձեռքերով շփել:
Ուշքի գալուց յետոյ, հինգ վայրկեան
պառկած պահել եւ մի քիչ զինի, օղի կամ
թէյ, սուրճ խմացնել:

Յրտից սառածին

Շորերը (զգեստը) հանել եւ հով տե-
ղում, սառը ջրի մէջ դնել կամ ձիւնով
մարմինը տրորել: Երբ մարմինը տաքա-
նայ եւ անդամները փափկեն, մի տաք սե-
նեակում պառկեցնել եւ օղի, զինի կամ
տաք թէյ խմացնել: Եթէ մի մասը կամ
ոտն է սառել, սառը ջրի մէջ պահել կամ

ձիւնով տրորել, ապա կամաց-կամաց տա-
քացնել եւ սառած մասերին ձէթ կամ սա-
ղի ճարպ քսել:

Հարբեցութեան դէմ

Հարբեցողի գլխին սառը ջուր ածել եւ
պառկեցնել: Եթէ սաստիկ հարբած է,
թէ՛ սառը ջուր խմացնել եւ թէ՛ գլխին ա-
ծել: Շուտով կերածը յետ է դրում (փըս-
խում) եւ հանգստանում է: Իսկ զինեմո-
լին խմիչքից հետո պահելու համար՝ իր
մէջը զինու հետ խառնել եւ խմացնել.
զըլում է եւ դադարում խմելուց:

Մայասիլ (բաւասիլ – բուքֆ կամ ֆասմի)

Դուրս եկած փոքրիկ պտուկները մա-
քուր, ջրի մէջ եռացած, մկրատով կտրել,
ապա աթթարից դնել երկու մսղալ դա-
նաֆոանի, որը սանդում ծեծել, մաղել
եւ երեք օր վէրքի վրայ շաղ տալ: Կամ
ուզտի մէջն երեք անգամ խմել:

Ոջլի դէմ

Թթու նռան կեղեւը եւ խնկի փոշին չի-
րիկ ձիթով եռացնել եւ տարին երկու ան-
գամ մարմինն օծել: Կամ ժիպակը դնել
եւ մի քիչ թքով շաղուել հինայի հետ, ա-
պա փոքր քսակի մէջ լցնել եւ պարանո-
ցից կախել կամ ծոցում պահել: Ոջլիները
կ'անյայտանան: